

# ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
1	Մանկի բաժին	Ախտահանվելու են արդյո՞ք դասադենյակները միջանկյալ և միջնակարգ դպրոցներում, հերթափոխների միջև:	Այո
2	Մանկի բաժին	Եթե բուժետները չեն գործելու, ինչու՞ բուժքույրը չի կարող օգտագործել այն (նույնիսկ բացօդյա մասը) Կորոնավիրուսի ախտանշաններ ունեցող աշակերտներին մեկուսացնելու և գրասենյակի միջով նրանց չանցկացնելու համար, որտեղ կվարակեն շատերին:	Մեկուսացման և կարանտինի այնպիսի տեղ ենք նախատեսել, որ այն հարմար լինի յուրաքանչյուր դպրոցի հատակագծի և բուժքրոջ գրասենյակի հետ:
3	Առողջություն	Ես մտահոգված եմ, երբ մարդիկ հարցնում են, արդյո՞ք աշակերտները/ուսուցիչները կարող են դեմքի վահան կրել: Դրանք լավ չեն պաշտպանում և իմ կարծիքով համաժեք չեն թվում (եթե իհարկե չկրեն դիմակի ՀԵՏ միասին):	Պետք է անպայման կտորե երեսի ծածք կրել: Դեմքի վահանը լրացուցիչ պաշտպանություն է և պետք է հագնել քիթը և բերանը փակող դիմակի հետ մեկտեղ:
4	Առողջություն	Կունենա՞ն ուսուցիչները անձնական պաշտպանության սարքեր ՄԻՆՉԵՎ դպրոցները բացվելը: ԲԴՄՇ-ն միշտ է այն մատակարարելու՞:	Բացարձակապես: Ուսուցիչներն արդեն պետք է տրամադրված լինեն բոլոր անհրաժեշտ սարքերը և դրանք կհամալրվեն շրջանի կենտրոնական պահեստում:
5	Առողջություն	Ո՞վ պետք է հսկի միջանցները դասամիջոցի ընթացքում, համոզվելու համար, որ երեխաները պահպանում են ֆիզիկական հեռավորության կանոնները: Կարող են ուսուցիչները/աշխատակազմը վտարել այն աշակերտներին, ովքեր վտանգի տակ են դնում մյուս աշակերտներին:	Ադմինիստրատորները և աշխատակազմը պետք է հիշեցնեն աշակերտներին ֆիզիկական հեռավորության և առողջապահական մյուս արձանագրությունների ամսին:
6	Առողջություն	Եթե որևէ մեկը վարակվի Կորոնավիրուսով, համայնքը կիմանա՞ այդ մասին:	Բոլոր աշխատակիցները և ծնողները կգաղաղացվեն, եթե դպրոցում հիվանդության որևէ դեպք տեղի ունենա:
7	Առողջություն	Կարո՞ղ է ինչ որ մեկը պատասխանել այս հարցին. Ի՞նչ արձանագրություններ կան, եթե աշակերտը հրաժարվի ենթարկվել օրենքներին և վտանգի տակ դնի մյուսների կյանքը, օրինակ՝ հանի իր դիմակը և դասի ընթացքում բարձրաձայն բղավի: Ինչպե՞ս վարվել, եթե վտանգավոր է շփման մեջ մտնել աշակերտի հետ:	Ուսուցիչը պետք է դիմի ադմինիստրատորին, եթե աշակերտը հրաժարվում է կրել դիմակ:
8	Առողջություն	Ինչպե՞ս է ԲԴՄՇ-ն իմանալու, թե ում է հետ է շփվել աշակերտը և/կամ կարող էք դպրոցում արագ քննություն անցկացնել: Արդյո՞ք այն կպահանջվի աշակերտներից:	Ցանկացած ժամանակ, երբ վարակված անձ կա, մենք հետևում ենք Լոս Անջելեսի հանրային առողջապահության գրասենյակի հրահանգներին, շփումը պարզելու համար: Աշխատակիցները կամ աշակերտները պետք է իրենց բժշկի մոտ քննություն անցնեն և մենք էլ, մեր հերթին, կարող էք քննական վայր առաջարկել:

# ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
9	Առողջություն	Եթե դպրոցներում գործում են երեխաների խնամքի կենտրոններ, ինչու՞ չեն կարող երեխաները դպրոց հաճախել և մնալ դասասենյակում 2 ժամից ավելի: Պետք է՞ մտածել բացօդյա դասասենյակների կամ փոխարինող այլ տեղերի մասին:	Տարրական դպրոցում գտնվող երեխաները արձանագրված են երեխաների խնամքի կենտրոնում, որոնք գործում են առողջապահական գրասենյակի առանձին հրահանգների ներքո: Դրանք բաց են, բայց գտնվում են խիստ պահանջների ներքո:
10	Առողջություն	Գրասենյակում մ են գտնվում Կորոնավիրուսի մեկուսացման սենյակը: Թե դրանք տեղափոխվել են մեկ այլ տեղ, գրասենյակի աշխատակիցներից հեռու լինելու համար:	Կորոնավիրուսի մեկուսացման վայրը գրասենյակում չէ, այն առանձին տեղ է: Եթե հարցեր ունեք խնդրում ենք դիմել Ուսանողական ծառայություններին կամ դպրոցի բուժքրոջը:
11	Առողջություն	Կորոնավիրուսի քանի՞ դեպք կար Բրբենքում, երբ դպրոցները փակվեցին: Ինձ տեղեկացրին, որ 2020 թվ. մարտի 13-ին կար ընդամենը 5 դեպք: Քանի՞ հիվանդ լինելու դեպքում է ապահով բացել դպրոցները:	Ահա թե ինչ չափանիշների պետք է բավարարի Լոս Անջելեսի գավառը: Մենք պետք է հասնենք կարմիր մակարդակի մինչև կարողանանք բացել դպրոցները: <a href="http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/data/index.htm">http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/data/index.htm</a>
12	Առողջություն	Որո՞նք են դպրոցները բացելու ծրագրերը: Ես հասկանում եմ, որ կան տարբեր տարբերակներ, որոնցից են հիբրիդ և հեռակա ուսուցման մոդելները: Որո՞նք են հիբրիդ մոդելի մանրամասները: Դիտարկում եք պատվաստանյութի առկայության փաստը: Գիտե՞ք մոտավոր ամսաթիվը: Ձմեռը մոտենում է և ի՞նչ ռիսկի տակ ենք մենք լինելու երբ դպրոցները բացվեն:	Ահա թե ինչ չափանիշների պետք է բավարարի Լոս Անջելեսի գավառը: Մենք պետք է հասնենք կարմիր մակարդակի մինչև կարողանանք բացել դպրոցները: <a href="https://public.tableau.com/shared/8DH3356MQ?:toolbar=n&amp;:display_count=y&amp;:origin=viz_share_link&amp;:embed=y&amp;:showVizHome=no">https://public.tableau.com/shared/8DH3356MQ?:toolbar=n&amp;:display_count=y&amp;:origin=viz_share_link&amp;:embed=y&amp;:showVizHome=no</a>
13	Առողջություն	Որո՞նք են դիմակ չկրելու բացառությունները, որը դուք նոր նշեցիք:	<a href="http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/docs/protection/GuidanceClothFace Coverings.pdf">http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/docs/protection/GuidanceClothFace Coverings.pdf</a>
14	Առողջություն	Կարո՞ղ է աշակերտը դեմքի կրել դեմքի վահան, դիմակի փոխարեն:	<a href="http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/docs/protection/GuidanceClothFace Coverings.pdf">http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/docs/protection/GuidanceClothFace Coverings.pdf</a>
15	Առողջություն	Իմ մտահոգությունն այն է, որ եթե ես ընտրեմ հիբրիդ մոդելը և հետո ստիպված լինեք կրկին փոխել ձեր միտքը, քանի որ առողջական պայմանները փոփոխվում են, ինչպե՞ս եք օգնելու ծնողներին պլանավորել իրենց աշխատանքային ժամերը/երեխաների խնամքը:	Դժբախտաբար, մենք չենք կարող գուշակել, թե երբ են առողջապահական պայմանները ստիպում մեզ ետ վերադառնալ հեռակա ուսուցման:
16	Առողջություն	Եթե երեխան հիվանդության ախտանշաններ ունենա, կտեղեկացնե՞ք դասարանի մյուս աշակերտներին զգուշանալու համար:	Եթե աշակերտը դրական քննական պատասխան ստանա, ապա այո:
17	Առողջություն	Կպահանջի՞ շրջանը բոլոր աշխատակիցներին քննություն հանձնել դպրոցները բացելուց առաջ:	Ոչ, դա դեռ հանրային առողջապահական պահանջ չէ:

## ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
18	Առողջություն	Կարո՞ղ են աշակերտները և ընտանիքները քննություն անցնել ԲԴՄՇ-ում ինչպես ԼԱՄԴՇ-ում:	Ոչ, դա դեռ հնարավոր չէ: Դուք կարող եք քննություն պահանջել ձեզ բժշկից կամ էլ մենք կարող ենք ուղղորդել ձեզ:
19	Առողջություն	Կարո՞ղ է երեխան բացառություն կազմել և չկրել դիմակ:	Միակ բացառություններն ընդգծված են այստեղ. <a href="http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/docs/protection/GuidanceClothFaceCoverings.pdf">http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/docs/protection/GuidanceClothFaceCoverings.pdf</a>
20	Առողջություն	Ես հարց եմ տեսնում, որը վերաբերվում է դպրոցները ապահով բացելու վերաբերյալ: Անհնար է սեղմել այդ հղումը: Կարո՞ղ եք նորից այն տեղադրել:	<a href="https://www.cdph.ca.gov/Programs/CID/DCDC/Pages/2019-2020/05032020-0001.aspx">Կալիֆոռնիայի մակարդակների համակարգի հետ ծանոթանալու համար, խնդրում ենք սեղմել այս հղումը //covid19.ca.gov/safer-economy/</a>
21	Առողջություն	Դպրոցն է չափելու երեխաների ջերմությունը, թե՞ ծնողը՝ տանը:	Աշակերտների ջերմությունը կչափվի դպրոցում, բայց ծնողն էլ կարող է այն չափել ու տանը պահել երեխաին, եթե նա հիվանդ է:
22	Առողջություն	Ինչպիսի՞ անվտանգություն եք ապահովում երեխաների համար: Ամեն օր թե՞ ամեն շաբաթ եք քննելու նրանց: Անցնելու՞ են աշակերտները Կորոնավիրուսի քննություն:	Ամեն օր, ծնողները պետք է ստուգեն երեխաների ախտանշանները: Մենք ամեն օր չենք քննելու երեխաներին, Կորոնավիրուսի համար, բայց կհետևենք հանրային առողջապահության հրահանգներին:
23	Առողջություն	Նորից եմ հարցնում... Այն ընտանիքների համար, ովքեր չեն հավատում, որ դիմակը գործում է, կա՞ արդյոք պահանջվող «ստորագրված համաձայնագիր»՝ պաշտպանելու այն երեխաներին, ովքեր հավատում են դիմակ կրելուն: Երեխաները լուրջ չեն ընդունում դիմակ կրելը, եթե ընտանիքի անդամները նույնպես դիմակ չեն կրում:	Աշակերտները և աշխատակազմը պետք է դիմակ կրեն: <a href="http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/docs/protection/GuidanceClothFaceCoverings.pdf">http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/docs/protection/GuidanceClothFaceCoverings.pdf</a>
24	Առողջություն	Կտրամադրի դպրոցը դիմակ երեխաների համար, թե՞ աշակերտը պետք է դպրոց ժամանի դիմակով:	Աշակերտը պետք է դպրոց ժամանի դիմակով: Եթե մոռանան, մենք ավելորդ դիմակ ունենք դպրոցում:

# ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
25	Առողջություն	Եթե հիբրիդ մոդելով դպրոց հաճախող երեխան հիվանդանա Կորոնավիրուսով և պետք է կարանտինի մեջ մնա, ապա նա կմիանա հեռակա ուսուցման երեխաների խմբին, թե՞ հիբրիդ մոդելի ուսուցիչը կշարունակի դասավանդել կարանտինի մեջ երեխաներին հեռակա մոդելով: Կունենանք հնարավոր 3 խումբ: Հեռակա, հիբրիդ և վարակված ու կարանտինի մեջ, որոնք պետք է սովորեն: Ուրեմն կունենա՞նք 3 դասավանդող ուսուցիչ:	Դրական պատասխան ստացած աշակերտները և բոլոր նրանք, ովքեր շփվել են հիվանդի հետ պետք է առնվազն 2 շաբաթ կարանտինի մեջ մնան:
26	Առողջություն	Պարտադի՞ր է որ դպրոց վերադարձող ԲՈԼՈՐ երեխաները դիմակ կրեն: Ընդհանուր կրթության՞ և Հատուկ ուսուցման: Վարակի ղեկավարման գրասենյակը (CDC) ոչ մի բացառություն չի նշում նույնիսկ հաշմանդամ երեխաների համար, օրինակի համար Աուտիզմ ունեցող երեխաները: Միայն առողջական խնդիրներ:	Աշակերտները պետք է դիմակ կրեն և մենք ավելորդ դիմակներ ունենք, եթե մոռանան կամ դիմակն աղտոտվի: Մենք աշխատում ենք հանրային առողջապահության գրասենյակի հետ պաշտպանիչ լրացուցիչ սարքեր (PPE) ձեռք բերել հատուկ ուսուցման կամ առողջական խնդիրներ ունեցող երեխաների, ինչպես նաև նրանց հետ աշխատող աշխատակազմի համար: <a href="http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/docs/protection/GuidanceClothFaceCoverings.pdf">http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/docs/protection/GuidanceClothFaceCoverings.pdf</a>
27	Առողջություն	Մրսածության ախտանիշներ, որոնք նման են Կորոնավիրուսի ախտանշաններին, ցուցադրող երեխաները ՊԵՏՔ է Կորոնավիրուսի քննություն անցնեն մինչև դպրոց վերադառնալը:	Մրսածության ախտանշաններ ցուցաբերող երեխաները պետք է մնան տանը և դիմեն բժշկին:
28	Առողջություն	Լրացուցիչ վերահսկիչ լինելու է դասասենյակում փոքրերի համար՝ առողջապահական անվտանգության ընթացակարգերին հետևելու համար: Օրինակի համար 1-ին դասարանցիները: Փոքրիկները չգիտեն վարակվելու վտանգը:	Ուսուցիչները և աշխատակազմը կսովորեցնեն երեխաներին առողջապահական և անվտանգության կանոնները: Երեխաների խնամքի կենտրոնն արդեն անում է այն և արդյունավետ ձևեր է գտնում երեխաներին հասկացնելու անվտանգ լինելու կարևորությունը:
29	Առողջություն	Ո՞վ է հետևելու տանը մեկուսացված Կորոնավիրուսով հիվանդ երեխաներին և երբ կարող են դպրոց վերադառնալ: Ցուցակ կազմվելու է: Այն ստուգվելու է ամեն օր:	Շրջանի Կորոնավիրուսի վերահսկման թիմը կհետևի բոլոր հիվանդներին և կաշխատի հանրային առողջապահության գրասենյակի հետ: Աշակերտները պետք է ստուգեն իրենց ախտանշանները (այժմ, աշխատակազմն է այն անում) և դպրոց գալուց առաջ չափեն ջերմությունը:
30	Առողջություն	Ուսուցիչները կչափե՞ն երեխաների ջերմությունը:	Շրջանը առնաց համան ջերմաչափեր է գնել: Հիանալի աշխատակիցները և ղեկավարները կչափեն երեխաների ջերմությունը դպրոցի մուտքի մոտ:

## ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
31	Առողջություն	Ինչպե՞ս կարող եք ապահովել աշակերտների մեծամասնության անվտանգությունը: Դասարաններն արդեն քանակից ավելի շատ աշակերտ ունեն և չեն համապատասխանում փոքր դասարանների չափանիշի հետ:	Հիբրիդ մոդելը թույլ է տալիս աշակերտների 50%-ին դպրոց հաճախել: Եթե 6 ուսքաչափ հեռավորություն պահելը հնարավոր չէ, ապա կտեղադրվեն միջնորմներ: Լոս Անջելեսի հանրային առողջապահությունը ստուգել է մեր դպրոցները և հաստատել, որ ամեն ինչ արված է օրենքով:
32	Առողջություն	Ինչպիսի՞ն է լինելու Բրբենք միջնակարգ դպրոցի դասացուցակը:	Հիբրիդ մոդելի դասացուցակը նույնը կլինի բոլոր դպրոցների համար, ինչպես ցույց տվեցին Փաուեր Փոինտ ներկայացման ընթացքում:
33	Առողջություն	Դպրոցը պատասխանատու է գտնել, թե ո՞ւմ հետ է շփվել հիվանդ անձը:	Այդ գործը կկատարվի թիմի միջոցով, որի անդամներից են բուժքույրերը, կադրերի բաժնի և Ուսանողական ծառայությունների աշխատկիցները:
34	Առողջություն	Ուսուցիչները/աշխատակազմը ամեն շաբաթ քննություն անցնո՞ւմ է:	Ոչ
35	Առողջություն	Ի՞նչ է լինելու, եթե աշակերտը ժամանի դպրոց և պարզվի, որ աշխատնշաններ ունի:	Նրանք մեկուսացման սենյակ կգնան, որտեղ բուժքույրը կհետևի դրական արդյունք ունեցողների հրահանգներին: Անմիջապես կզանգահարենք ծնողներին, ովքեր տուն կտանեն երեխային, իսկ մենք ստուգենք, որ երեխան քննություն անցնի, թե ում հետ է շփվել և կուղարկենք ծանուցում: Մենք կհետևենք հրահանգների, որ մյուսներն էլ կարանտին անցնեն:
36	Առողջություն	Միջնակարգ դպրոցի հերթափոխների արանքում, ուսուցիչները պատասխանատու՞ են նստարանները մաքրելու համար	Աշակերտները պետք է մաքրեն իրենց նստարանները:
37	Առողջություն	Նույնիսկ տարրական դպրոցի աշակերտները պե՞տք է մաքրեն իրենց նստարանները/միջնորմները:	ԱՄ-ից մինչև 3-րդ դասարաններում կիրականազվի հեռավորության պահպանում և միջնորմներ չեն օգտագործվի: Դեռ մտածում ենք, թե ինչպես ենք այստահանելու/մաքրելու 4-րդ և 5-րդ դասարանցիների միջնորմները:
38	Առողջություն	Ո՞վ է ախտահանելու դասասենյակները դասերի կամ հերթափոխների միջև:	Դեռ կորոշվի, բայց կարծում ենք, որ թիմային ջանք պետք է թափել:
39	Առողջություն	Կթույլատրվե՞ն աշակերտները խաղալ իրար հետ դասամիջոցի ընթացքում:	Առողջապահական ընթացիկ հրահանգների համաձայն նրանք պետք է 6 ուսքաչափ հեռու լինեն իրարից:
40	Առողջություն	Մտածո՞ւմ եք դասերն անցկացնել բացօթյա վայրում:	Մենք կիրախուսենք բացօթյա վայրերի օգտագործումը:

# ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
41	Առողջություն	Ինչպե՞ս էք ապահովում 6 ոտքաչափ հեռավորություն դասասենյակում: Ես կարծում եմ, որ բավական տեղ չկա:	Երեխաները պետք է նստեն մեկ ու մեջ դրված նստարանների: Մենյակներից հանում ենք ավելորդ կահույքը և աշակերտների թիվը նվազեցնում 50%-ով, ինչպես նաև ավելացնում թափանցիկ միջնորմներ, եթե 6 ոտքաչափ հեռավորություն հնարավոր չէ պահպանել:
42	Առողջություն	Մա լավ հարց է. Ինչպե՞ս են ուսուցիչները վարվելու այն աշակերտների հետ, ովքեր անընդհատ կվտանգեն մյուսների կյանքը: Ինչպե՞ս են նրանք անվտանգ պահելու իրենց և մյուսներին: Պետք չէ՞ պատրաստվել:	Մենք կարգապահական օրենքներ ենք մշակում, որոնք վերաբերվում են առողջապահական և անվտանգության կանոնների պահպանմանը:
43	Առողջություն	Ի՞նչ էք անում օդափոխումը բարելավելու համար: Մակերևույթ մաքրելը հնացած երևույթ է:	Մենք տարբեր մեթոդներ ենք փնրում դասասենյակների օդի մաքրումը իրականացնելու և օդածին վիրուսի/բակտերիայի ոչնչացման համար:
44	Առողջություն	Օդափոխիչներ գնել է արդյո՞ք շրջանը (HEPA ֆիլտրներ) դասասենյակների համար:	Մենք տարբեր լուծումներ ենք փնրում դասասենյակների օդի որակը և զտումը կառավարելու համար:
45	Առողջություն	Կորոնավիրուսը օդածին է: Ի՞նչ էք անում օդափոխումը բարելավելու համար: Ուլտրամանուշակագույն սարքեր դրվելու՞ են օդափոխիչների մեջ: Օդի հոսք լինելու՞ է դասասենյակում:	Մենք տարբեր լուծումներ ենք փնրում դասասենյակների օդի որակը և զտումը կառավարելու համար:
46	Առողջություն	Ո՞վ է վերահսկելու դպրոցները: Երեխան կմնան երեխա և ոմանք կանտենին գետնի վրա նշված շրջանակները գիտունիկ ձևանալու համար: Ինչպե՞ս պետք է հսկվի/դաստիարակվի այդ աշակերտը, քանի որ նա կարող է վտանգի տակ դնել մյուսներին:	Մենք կարգապահական կանոններ ենք մշակում և պահանջելու ենք երեխաներին ենթարկվել կանոններին, եթե ցանկանում են անձամբ դպրոց հաճախել:
47	Առողջություն	«Մաքրող նյութերից կամ տնային օգտագործման ապրանքներից շատերը կարող են գրգռել աչքերը կամ կոկորդը կամ գլխացավ ու առողջական խնդիրներ առաջացնել, ներառնելով քաղցկեղ» - Թոքերի ամերիկյան ասոցիացիա  Ինչու՞ ենք երեխաներին դպրոց ուղարկում, եթե միջավայրը անվտանգ չէ: Աշակերտները չպետք է տառապեն գլխացավից, աչքերի և կոկորդի գրգռումից: Եթե այս նյութերը գրգռեն նրանց կոկորդը, ինչպե՞ս ենք իմանալու թե ինչից են հազում երեխաները. Կորոնավիրուսից, թե գրգռված վիճակից:	Յուրաքանչյուր նյութ օգտագործվում է ըստ հրահանգի և մենք համոզվում ենք, որ այն օգտագործվում է ապահով կերպ: Միշտ էլ դժվար է գտնել հիվանդության ախտանշանը, բայց մենք կաշխատենք ընտանիքների հետ, կգտնենք, թե ինչի համար է երեխան մնալու տանը (օրինակ՝ գրիպ, հարբուխ, Կորոնավիրուս), թե վերադառնալու է դպրոց (օրինակ՝ ակերգիա):

## ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
48	Առողջություն	Կատարելու՞ էք Կորոնավիրուսի քննություն դպրոցում: Իմ զարմիկը Յել համալսարանի ուսանող է և նրանք ունեն թքի միջոցով կատարվող 15 րոպեանոց քննություն: Ուսանողները կատարում են այն շաբաթը 2 անգամ:	Դպրոցներում քննություն չի կատարվում, բայց կարող ենք առաջրկել որտեղ այն անել:
49	Առողջություն	Կատարելու՞ էք Կորոնավիրուսի քննություն:	Դպրոցներում դեռ քննություն չի կատարվում:
50	Առողջություն	Ուսուցիչներն են մաքրելու դասասենյակները հերթափոխների արանքում, թե՞ լրացուցիչ հավաքարարներ եք ընդունելու:	Լրացուցիչ հավաքարարներ աշխատանքի չեն ընդունվելու: Դասասենյակները կմաքրվեն հերթափոխների արանքում և մենք աշխատում ենք մանրամասների վրա:
51	Առողջություն	Քննության որևէ ծրագիր կամ մինչև դպրոց գալը երեխաներին քննելու ծրագիր ունե՞ք: Ծրագիր ունե՞ք աշխատակազմին կամ աշակերտներին կանոնավոր կերպ քննելու համար:	Մենք դեռ չենք պահանջում բոլոր աշակերտներին և աշխատակիցներին քննություն անցնել:
52	Առողջություն	Ինչպե՞ս եք չափելու ջերմությունը: Պե՞տք է աշակերտը շուտ դպրոց ժամանի, որպեսզի չափեն նրա ջերմությունը:	Երեխաների ջերմությունը պետք է չափել տանը և դպրոց ժամանելիս: Մենք բարձր արագության ջերմաչափներ ենք գնել, որոնք կգործեն կես վայրկյանի ընթացքում: Դրանք պատվիրել ենք դպրոցների համար, իսկ անվտանգության թիմերն աշխատում են նյութատեխնիկական ապահովման վրա:
53	Առողջություն	Նորությունների թողարկման ընթացքում, ես դպրոցների միջանցների լուսանկարներ եմ տեսել, որտեղ չեն պահպանում սոցիալական հեռավորություն: Ինչպե՞ս եք դուք անելու այդ դասամիջոցի ընթացքում:	Հիբրիդ մոդելի ընթացքում, աշակերտների միայն 50%-ն անձամբ դպրոց կհաճախի: Յուրաքանչյուր դպրոցի անվտանգության թիմ պատրաստում է դպրոցը ֆիզիկական հեռավորություն պահպանելու համար՝ տեսողական հիշեցումների օգնությամբ: Օրինակ՝ որոշ միջանցներ կլինեն միակողմանի երթևեկության համար և հսկիչները կհսկեն և կհիշեցնեն աշակերտներին:
54	Առողջություն	Ես ենթադրում եմ, որ դուք քննարկում ենք դպրոց վերադառնալը, որովհետև հիվանդների թիվը ավելի քիչ է, երբ մենք սկսեցինք հեռակա ուսուցումը: Ինչպե՞ս եք որոշելու, թե հիվանդության քանի դեպքից հետո եք ետ գնալու դեպի հեռակա ուսուցում:	Մենք օգտվում են նահանգային հրահանգներից: Մենք պետք է գտնվենք կարմիր մակարդակում, մինչև դպրոցները կկարողանանք բացել. <a href="https://covid19.ca.gov/safer-economy/">https://covid19.ca.gov/safer-economy/</a>  Եթե դպրոցները բացելուց հետո, հիվանդությունների թիվն ավելանա, մենք ետ կգնանք հեռակա ուսուցման:

# ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
55	Առողջություն	Միջնակարգ դպրոցում միայն 7 բուսակի ընթացքում պետք է աշակերտները անցնեն մեկ դասասենյակից: Դպրոցն ունի մոտավորապես 100 դասասենյակ և միայն 5 ցերեկային հավաքարար: Հնարավոր չէ ախտահանել բոլոր դասասենյակները այդ ժամանակահատվածում: Ո՞վ է ախտահանելու նստարանները միջնակարգ դպրոցում:	Մենք աշխատում ենք այն ուղղությամբ, որ աշակերտները մաքրեն իրենց նստարանները:
56	Առողջություն	Ի՞նչ էք անելու, եթե աշխատակիցը/ուսուցիչը/աշակերտը վարակվի Կորոնավիրուսով:	Դպրոցում վարակի կառավարման ծրագիրը տեղադրված է մեր կայքում:
57	Առողջություն	Ինչպե՞ս են մանկապարտեզի, 1-ին և 2-րդ դասարանի աշակերտները հասկանալու հրահանգները և հետևելու դրանց:	Մենք տեղեկություն և նյութեր ենք հավաքում այդ դասարանների համար: Ուսուցիչներն ու աշխատակազմը կշարունակեն սովորեցնել և ամրապնդել օրենքները: Մենք գնահատում ենք ծնողների ջանքերը, թե ինչպես են երեխաներին սովորեցնում ձեռքերը լվանալ, դիմակ կրել և պահպանել հեռավորություն:
58	Առողջություն	Քանի որ դպրոցներից շատերի գրասենյակներն ու բուժքրոջ սենյակը շատ փոքր է, դրսում էք առանձնացնելու հիվանդներին, թե՞ մեկ ուրիշ սենյակում:	Մենք առանձին սենյակներ ունենք հիվանդ և առողջ աշակերտների համար, ինչպես նաև խճողումներից խուսափելու համար հատկացված սենյակներ:
59	Առողջություն	Դիմակի փոխարեն, կարելի՞ է միայն երեսի վահան կրել:	Մեզ պետք է հետևել այս հրահանգներին. <a href="http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/docs/protection/GuidanceClothFaceCoverings.pdf">http://publichealth.lacounty.gov/media/coronavirus/docs/protection/GuidanceClothFaceCoverings.pdf</a>
60	Առողջություն	Ինչպե՞ս էք ապահովելու միջանցքների և զուգարանների անվտանգությունը: Օրինակ՝ քայլել միջանցքով և օգտվել զուգարանից:	Մենք կհսկենք միջանցքները: Չուգարաններում կնշվեն, թե քանի հոգի է կարելի ներսում գտնվել: Վերահսկողություն կսահմանվի:
61	Առողջություն	Դուք իսկապես հավատում ե՞ք, որ աշակերտները կհետևեն հրահանգներին, երբ ամիսներ ի վեր չեն տեսնվել իրենց ընկերների հետ:	Մենք կանենք ամեն ինչ երեխաներին հետևել տալ առողջապահական և անվտանգության հրահանգներին հետևելու համար:
62	Առողջություն	Կփորձե՞նք օգտվել բացօթյա տարածություններից և դասերն անցկացնել այնտեղ:	Եթե հնարավոր լինի, մենք կխրախուսենք, որ օգտագործվեն բացօթյա տարածությունները:



# ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
63	Առողջություն	Ինչպես ես հասկացա, ոչ ոք չի հսկելու հեռավորության պահպանումը և խճողումները, ինչպես նաև հրահանգներին հետևելը: Դուք ենթադրում էք, որ աշակերտները պետք է պատասխանատու լինեն և հետևեն նշաններին: Ես ցանկանում եմ հավատալ, բայց այն չի իրականանում:	Դպրոցի հսկիչները, ադմինիստրատորներն ու մյուս աշխատակիցները դասերի միջև կհսկեն միջանցքները, գուգարանները և մյուս տարածքները: Հուսով եմք, որ մեր աշակերտները կհետևեն առողջապահական և անվտանգության հրահանգներին: Մենք գնահատում ենք ձեր համագործակցությունը այս գործում:
64	Առողջություն	Կա՞ն անձնական պաշտպանության այնպիսի սարքեր կամ ախտահանիչ նյութեր, որոնք ԲԴՄՇ-ն դժվարությամբ կամ բավարար քանակությամբ չի կարողանում ձեռքբերել:	Մենք դիմակ կհատկացնենք այն աշակերտների համար, ովքեր դիմակ չունեն, բայց խրախուսում ենք ծնողներին երեխաներին դպրոց ուղարկել դիմակով:
65	Առողջություն	Ինչպե՞ս եք մանկապարտեզի աշակերտներին 6 ոտքաչափ հեռու պահելու իրարից:	Մենք կսովորեցնենք նրանց, բայց դուք ել կարող եք սկսել նրանց սովորեցնել, թե ինչպես դիմակ կրել, 6 ոտքաչափ հեռավորություն պահպանել և լվանալ ձեռքերը:
66	Առողջություն	Ես աշխատում եմ համակարգիչների սենյակում: Ո՞վ է ախտահանելու համակարգիչները: Ուսուցիչները՞, թե հավաքարարը: Աշակերտները՞:	Մենք դեռ աշխատում ենք այս ուղղությամբ, բայց հավանական է, որ կկատարվի ուսուցչների, աշակերտները և մյուս աշխատակիցների միահամուռ ուժերով:
67	Առողջություն	Աշխատակազմը կտեղեկացվի՞ դրական քննական արդյունքների մասին:	Եթե դպրոցում հիվանդության դեպք պատահի, ապա կգուշացվեն բոլոր աշխատակիցները, ինչպես նաև այդ դպրոց եկած շրջիկ աշխատակիցները:
68	Առողջություն	Մաքրություն կատարվելու՞ է դասերի միջև:	Այո
69	Առողջություն	Ի՞նչ կլինի հիբրիդ մոդելին, եթե դպրոցում Կորոնավիրուսով հիվանդ լինի: Ետ կվերադառնանք հեռակա ուսուցման:	Այո
70	Առողջություն	Առողջության և անվտանգության մասին — դիմակ կրե՞լ և 6 ոտքաչափ հեռավորություն պահպանել դասասենյակում:	Այո
71	Առողջություն	Ախտահանիչ անձեռոցիկներ կա՞ն, որպեսզի աշակերտներն ախտահանեն նստարանները:	Այո
72	Առողջություն	Ինչ որ մեկը ախտահանելու՞ է դասասենյակները յուրաքանչյուր դասից հետո:	Այո
73	Առողջություն	Պարտադի՞ր է, որ բոլոր աշխատակիցները և աշակերտները դիմակ կրեն:	Այո
74	Առողջություն	Դիմակ կամ երեսի վահան կրելու՞ են աշակերտները:	Այո
75	Առողջություն	Դպրոցի բակում տեղադրված դասասենյակներն ունե՞ն merv 8 ֆիլտրներ:	Այո

## ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
76	Առողջություն	Եթե Կորոնավիրուսով հիվանդ երեխաները չկարողանան անձամբ դպրոց հաճախել, կմասնակցե՞ն հեռակա ուսուցման դասընթացներին:	Այո
77	Առողջություն	Հերթ կպահպանվի՞ զուգարանի դռան մոտ կամ վերահսկվի սոցիալական հեռավորության համար:	Այո և այո
78	Առողջություն	Նշվել է, որ երեխաների նստարանները կմաքրվեն օրվա վերջում, իսկ դասերի միջև:	Այո, դասասենյակներում մաքրող նյութեր կլինեն և կմաքրվեն նստարանները:
79	Առողջություն	Եթե տարրական դպրոցում միջնորմներ տեղադրվեն, աշակերտներին պե՞տք է դիմակ կրել: Բնչքա՞ն է միջնորմի չափսը:	Այո, նրանք պետք է դիմակ կրեն:
80	Առողջություն	Եթե դպրոցները բացվեն հիբրիդ մոդելով, աշակերտի ջերմությունը պե՞տք կլինի չափել:	Այո, օրվա սկզբին, բոլոր աշակերտների և աշխատակիցների ջերմությունը պետք է չափվի:
81	Առողջություն	Կարո՞ղ են աշակերտները դեմքի իրենց սեփական վահանները կրել:	Այո, քանի դեռ երեսի կամ վզի ծածկոց եք կրում:
82	Առողջություն	Եթե աշակերտը կամ աշխատակիցը վարակվի դպրոց գալուց հետո, ի՞նչ կլինի խմբի/հերթափոխի հետ: Կշարունակե՞ն նրանք ուսումը հեռակա եղանակով:	Այո, եթե Կորոնավիրուսի դրական պատասխան ստանան:
83	Առողջություն	Մաքրվելու՞ են դասասենյակները հերթափոխների միջև: Նշվել է, որ դասասենյակները կմաքրվեն օրվա վերջում, իսկ դասամիջոցի՞ց հետո:	Այո, այն կմաքրվի հերթափոխների միջև:
84	Առողջություն	Եթե աշակերտների մեծամասնությունը համաձայնվի անձամբ դպրոց վերադառնալ, կարո՞ղ է դպրոցը բավարար տեղ և աշխատակազմ հատկացնել: Եթե ոչ, ինչպե՞ս եք ընտրելու, թե ո՞վ է վերադառնալու ետ դպրոց:	Այո, մենք կարող եք անել այն:
85	Առողջություն	Բնչպե՞ս են աշակերտները սնվելու դասամիջոցին: Կպահպանվի՞ սոցիալական հեռավորություն, երբ աշակերտները հանեն դիմակը ուտելու ընթացքում:	Այո, կպահպանվի սոցիալական հեռավորություն:
86	Առողջություն	Կչափվի աշակերտների ջերմությունը դասերից առաջ:	Այո
87	Առողջություն	Կտեղեկացվե՞ն ծնողները առողջապահական հրահանգների, անվտանգության խնդիրների, վարակի, քննական դրական արդյունքի և դպրոցը փակելու վերաբերյալ:	Այո
88	Առողջություն	Կորոնավիրուսի անվտանգության թիմի անդամները ընթացի՞կ աշխատակիցներ են:	Այո

## ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
89	Առողջություն	Կիսրախուսվի՞ աշակերտին տանը մնալ, եթե նրա ՇՆՏԱՆԻՔԻ անդամներից մեկը հիվանդ է:	Այո
90	Առողջություն	Ի՞նչ է լինելու, երբ աշակերտը տանը մեկուսացված լինի: Կկարողանա՞ նրանք սովորել հեռակա ուսուցման եղանակով:	Եթե միայն մեկ աշակերտ է, նա կաշխատի իր ուսուցչի հետ առաջադրանքները կատարելու համար: Եթե ամբողջ դասարանն է՝ նրանք կօգտվեն հեռակա ուսուցման մոդելից:
91	Առողջություն	Կարո՞ղ են ծնողները օգտագործելու համար: Երբեք երեխայի հետ օրվա ընթացքում օգտագործելու համար:	Այո
92	Առողջություն	Կչափվի՞ աշակերտի ջերմությունը դպրոց ժամանելիս: Ինչպես հիվանդանոցներում, այնպես էլ ուրիշ հաստատություններում անում են նույնը:	Այո, մենք առանց հպման ջերմաչափեր ենք գնել և տեղադրել մուտքերի մոտ: Կսովորեցնենք և կպարտադրենք աշակերտներին չափել իրենց ջերմությունը դպրոց մտնելուց առաջ:
93	Առողջություն	Կչափվի՞ երեխաների ջերմությունը դպրոց ժամանելիս:	Այո, մենք առանց հպման, բարձր արագության ջերմաչափեր ենք գնել:
94	Առողջություն	Չափելու՞ են աշակերտները իրենց ջերմությունը: Եթե այո, ապա ինչպե՞ս և որտե՞ղ:	Աշակերտների ջերմությունը կչափվի դպրոց մտնելուց առաջ: Մենք առանց հպման ջերմաչափ ենք գնել, որը շատ արագ է աշխատում:
95	Կադրերի բաժին	Ինչպե՞ս եք որոշելու, թե ԲԴՄՇ-ի որ ուսուցիչն է դասավանդելու APEX ծրագիրը:	Ուսուցիչների դիմումագրերը կբաժանվեն ուրբաթ օրը:
96	Կադրերի բաժին	Մինչև ե՞րբ են ուսուցիչները պատասխանելու, թե ցանկանում են ետ վերադառնալ:	Դիմումագիրը կուղարկվի հոկտեմբերի 23-ին և պետք է վերադարձվի հոկտեմբերի 30-ին:
97	Կադրերի բաժին	Արհմիությունների կողմից համաձայնագիր կա հիբրիդ մոդելի վերաբերյալ:	Մենք աշխատում ենք արհմիության հետ հիբրիդ մոդելի աշխատանքի ձև գտնելու համար: Դեռ վերջնական փաստաթուղթ չկա:
98	Դասավանդում	Ո՞րն է առաջարկված դասացուցակը: օրինակ՝ 1 -ին խումբ՝ շաբաթը 2 օր, մյուսը՝ շաբաթվա մյուս 2 օրը:  Թե՞ ամեն օր կես օրով մոդելը:	Այս հարցին պատասխանվեց ուղիղ եթերի ընթացքում և դասացուցակը տեղադրված է Փաուեր Փոինտ ներկայացման մեջ:
99	Դասավանդում	Խոսելու ե՞ք 6-րդ դասարանցիների ունեցած տարբերակների շուրջ: Ի՞նչ է APEX-ը: Կհամարեք նրանց որպես միջանկյալ դպրոցի աշակերտներ:	APEX-ը հարթակ է, որով դասավանդվում են աշակերտները: Այն առաքում է ուսումնական ծրագիրը: Երեխաները կմնան իրենց դպրոցում: Նրանք միջանկյալ դպրոցի աշակերտներ են:

# ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
100	Դասավանդում	Կարո՞ղ են աշակերտները մնալ AP դասարանում, եթե ընտրեն Apex:	APEX-ը հրամցնում է AP դասեր: Այնուամենայնիվ, այն չունի այն բոլոր դասերը, որն ունի միջնակարգ դպրոցը:
101	Դասավանդում	Կվերամշակի՞ շրջանը հեռակա և/կամ հիբրիդ մոդելի համացանցային կրթության ծրագիրը: Թե՞ նույնը կմնա ուսումնական տարվա մնացած մասի ընթացքում: Յուրաքանչյուրի վիճակը տարբեր է, բայց ինձ համար շատ դժվար է հեռակա ուսուցումը:	Ներկա ժամանակ մենք չենք կատարում ոչ մի փոփոխություն: Խորհուրդ ենք տալիս դիմել ուսուցչին կամ դպրոցի տնօրենին:
102	Դասավանդում	Այս հարցը տվել եմ նաև էլեկտրոնային նամակի միջոցով, բայց ինձ շատ է հետաքրքրում, թե ինչպես է գործելու երկվեզու ուսուցումը: Կշարունակե՞ն աշակերտները աշխատել իրենց ուսուցչի հետ, եթե դասարանի մեծ մասն ընտրի հեռակա ուսուցման մոդելը:	Քանի որ երկվեզու ուսուցումը փոքր ծրագիր է, մենք չենք կարող ոչինչ ենթադրել, մինչև չտեսնենք ծնողների պատասխանները: Պատրաստ եղեք ընդունել այն փաստը, որ երեխան նոր ուսուցիչ կունենա:
103	Դասավանդում	Ինչպիսի՞ն կլինի ուսուցումը միջնակարգ դպրոցի աշակերտների համար, ովքեր ընտրեն հեռակա ուսուցումը և ոչ թե հիբրիդ մոդելը: Տեսախցիկներ կտեղադրվե՞ն դպրոցում, որպեսզի բոլորը ստանան նույն նյութերը/դասը:	Հեռակա ուսուցման աշակերտները կաշխատեն համացանցային APEX ծրագրով: Նրանք ինքնուրույն են աշխատում՝ կատարելով առաջադրանքներն ուսուցչի աջակցությամբ են:
104	Դասավանդում	Եթե մենք ուրբաթ օրը «պարտավորվենք», դա մեր վերջնական պատասխանն է լինելու, թե՞ կարող ենք այն փոխել, երբ ավելի մոտենանք դպրոցները բացելու օրվան: Շնորհակալություն:	Վերջնական է, եթե առողջապահական պայմանները չփոխեն մեր ծրագրերը:
105	Դասավանդում	Եթե մենք ընտրենք 100% հեռակա ուսուցում, ապա ուսումնական ծրագիրը նույնը կմնա, ինչպես հիմա է՞: (1-ին դասարան)	Տարրական դպրոցի ուսումնական ծրագիրը կշարունակվի մնալ ԲԴՄՇ-ի հիմնական ծրագիրը: Սրա մասին ավելի մանրամասնորեն կխոսենք հանդիպման ընթացքում:
106	Դասավանդում	Եթե աշակերտն ընտրի 100% հեռակա ուսուցում, նա ստիպված կլինի՞ արձանագրվել Անկախ ակադեմիայի (ILA) դասերին:	Այո սա վերաբերվում է 7-12-րդ դասարանցիներին:
107	Դասավանդում	Որո՞նք կլինեն դպրոցական ժամերը հիբրիդ մոդելի ընթացքում՝ 8-3-ը, թե՞ 8-12-ը:	Դպրոցի դասերը կլինեն կես օր, երկու հերթափոխով՝ առավոտյան և կեսօրից հետո: Սրա մասին ավելի մանրամասնորեն կխոսենք հանդիպման ընթացքում:
108	Դասավանդում	Ես մտածում եմ այն մասին, որ ծնողներից շատերը, ովքեր ցանկանում են, որ երեխաները դպրոց վերադառնան կպահեն՞ ն երեխաներին տանը և զբաղվեն տնային ուսուցմամբ: Հեռակա ուսուցումը դժվարի է ինձ համար 4 երեխաների հետ միասին:	Տնային ուսուցման նահանգային պահանջները բացատրված են Կալիֆոռնիայի կրթական գրասենյակի կայքում:
109	Դասավանդում	Եթե երեխան վերադառնա դպրոց, ապա նա կունենա՞ նույն ուսուցիչը:	Մա կախված է, թե քանի աշակերտ կընտրի յուրաքանչյուր մոդելը: Մենք չենք կարող երաշխավորել, որ ուսուցիչը նույնը կմնա:

## ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
110	Դասավանդում	Հրամցնում է Անկախ ուսուցման ակադեմիան AP բոլոր դասերը:	Մեծ մասը, բայց ոչ բոլորը:
111	Դասավանդում	Եթե տարրական դպրոցի աշակերտն ընտրի 100% հեռակա ուսուցում, կմնա՞ նույն ուսուցչի դասարանում:	100% հեռակա ուսուցում ընտրած աշակերտները հավանաբար կունենան նոր ուսուցիչ:
112	Դասավանդում	Միջանկյալ և միջնակարգ դպրոցի աշակերտները կմնա՞ն ամբողջ օրը նույն դասարանում, թե՞ ոչ: Կամաքովե՞ն դասասենյակները հերթափոխների միջև:	Աշակերտները կփոխեն դասասենյակները և նաև կախտահանվեն:
113	Դասավանդում	Եթե աշակերտները վերադառնան դպրոց, կաշխատեն թղթի վրա, թե՞ համակարգչի: Ես լսել եմ, որ ուրիշ դպրոցներում, ամբողջ օրը, աշակերտները նստում են համակարգիչների առջև:	Ուսուցիչներն անհամբերությամբ սպասում են օգտվել այլ միջոցներից:
114	Դասավանդում	Հնարավոր է, որ փոքր երեխաները դասամիջոցին դուրս գան մաքուր օդի: Շարունակել պահպանել հեռավորություն, բայց հանել դիմակները:	Ուսուցիչներին խրախուսում ենք օգտվել բացօթյա տարածքներից: Մենք կհետևենք հանրային առողջապահության հրահանգներից և կաշխատենք թույլ տալ հանել դիմակները, քանի դեռ այն անվտանգ լինի:
115	Դասավանդում	Ինչպե՞ս է APEX-ը սկսելու դասերը կիսամյակի կեսից: Թե՞ Անկախ կրթության ակադեմիան կես կրեդիտ կտա, այն ինչի համար, որն արդեն անցել է:	Դասերը բաժանված են կիսամյակների: Բոլոր աշակերտները կրեդիտ կստանան իրենց կատարած աշխատանքի դիմաց:
116	Դասավանդում	Եթե ընտրենք հիբրիդ կամ հեռակա ուսուցում, կարո՞ղ ենք հետազայում մտքներս փոխել:	Պարտավորվածությունը ստիպում է ծնողներին ուսուցման մոդել ընտրել ուսումնական տարվա մնացած կեսի համար: Շրջանը չի կարող երաշխավորել որևէ փոփոխություն հիմնվելով դասարանների կազմավորվածությունից հետո:
117	Դասավանդում	Ինչու՞ են հեռակա ուսուցում ընտրող աշակերտները փոխելու ուսուցիչը: Նոր ուսուցիչներ եք ընդունելու, թե՞ արդեն շրջանում աշխատող ուսուցիչներն են լինելու:	Հեռակա ուսուցման ուսուցիչները կլինեն ԲԴՄՇ-ի ուսուցիչները, ովքեր արդեն աշխատում են շրջանում: Ինչպես միշտ, անհրաժեշտության դեպքում, մենք կընդունենք նոր ուսուցիչներ: Քանի որ մեզ հարկավոր են ուսուցիչներ և՛ հեռակա, և՛ հիբրիդ մոդելի համար, որոշ ուսուցիչներ կվերանշանակվեն: Առայժմ չենք պատրաստվում աշխատանքի ընդունել նոր ուսուցիչներին:
118	Դասավանդում	Ինչու՞ հիբրիդ մոդել և ոչ թե լրիվ վերադարձ:	Առողջապահական պայմանները չեն ներում:

## ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
119	Դասավանդում	Ինչպե՞ս կարող է միջանկյալ դպրոցի աշակերտը շարունակել հեռակա ուսուցումը Անկախ ուսուցման ակադեմիայում կիսատ վերջացրած 6 դասով, երբ Անկախ ուսուցման ակադեմիայի դասերը պետք է անել միաժամանակ մեկ հաստ:	Երեխաները կվերցնեն APEX ծրագրի երկրորդ կիսամյակի դասերը: Նրանք կարող են 2-րդ կիսամյակին անհրաժեշտ դասերն ավարտել 22 օրվա ընթացքում: Նրանք միաժամանակ կվերջացնեն մեկ առարկա: Ժամանակը բավարար է երկրորդ կիսամյակի 6 դասերն ավարտելու համար:
120	Դասավանդում	Դպրոց վերադարձած որոշ շրջաններ ունեն 2 լրիվ օրվա դասացուցակ, ոչ թե 4 կես օրվա: Դա հեշտ չի լինի՞ ն՝ ծնողների, ն՝ մաքրող աշխատակազմի համար:	Դպրոցները բացելու կոմիտեն տարբեր տարբերակներ է մտածել և կես օրով դասացուցակը կնվազեցնի ճաշի ժամին աշակերտների շփումը և հավաքությունները, ինչպես նաև թույլ կտա աշակերտներին շաբաթը 4 օր աշխատել ուսուցչի հետ:
121	Դասավանդում	Ինչու՞ է ընտրվել առավոտյան/կեսօրից հետո մոդելը և ոչ թե շաբաթը 2 օր լրիվ օրով մոդելը:	Դպրոցները բացելու կոմիտեն տարբեր տարբերակներ է մտածել և ընտրել կես օրով դասացուցակը: Առաջնային պատճառը ճաշի ժամին երեխաների շփումն է, մաքրությունը և շաբաթը 4 օր ուսուցիչների հետ աշխատելը 2-ի փոխարեն: 2. Ծնողներն ու պահապանները պետք է իրենց համար հարմար տարբերակ ընտրեն:
122	Դասավանդում	Կլինե՞ն նույն ընտանիքի երեխաները նույն հերթափոխում՝ առավոտյան կամ կեսօրից հետո:	Դպրոցները բացելու կոմիտեն տարբեր տարբերակներ է մտածել և ընտրել կես օրով դասացուցակը: Առաջնային պատճառը ճաշի ժամին երեխաների շփումն է, մաքրությունը և շաբաթը 4 օր ուսուցիչների հետ աշխատելը 2-ի փոխարեն: 2. Ծնողներն ու պահապանները պետք է իրենց համար հարմար տարբերակ ընտրեն:
123	Դասավանդում	Ես ուշ միացա ձեզ, ե՞րբ ենք վերադառնալու հիբրիդ մեթոդին:	Հիբրիդ մոդելի սկսվելը հիմնված է Լոս Անջելեսի հանրային առողջապահության գրասենյակի թույլտվության վրա, որն իր հերթին հիմնված է Լոս Անջելեսի գավառի Կորոնավիրուսով վարակված անձանց թվի վրա:
124	Դասավանդում	Հնարավո՞ր է միացնել Դիզնի և ՄքՔինլի դպրոցների աշակերտները և ստեղծել լրիվ 1 հիբրիդ դասընթաց և լրիվ 1 հեռակա ուսուցման մոդել յուրաքանչյուր դասարանի համար:	Մա մեկ տարբերակ է, որը կհետազոտենք երկվեզու ուսուցման ծրագրի համար:

## ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
125	Դասավանդում	Նորից եմ հարցս տալիս – Իմ երեխաների դպրոցներից ոչ մեկը չունի այնքան մեծ դասասենյակ, որ կարողանա դասարանի լրիվ աշակերտները տեղավորվեն իրարից 6 որքաչափ հեռու: Ինչպե՞ս եք լրիվ դասարանը տեղավորելու և ունենալ մեկ ուսուցիչ:	Աշակերտները բաժանվելու են 2 խմբի՝ Ա և Բ: Դա նշանակում է, որ միայն մեկ խումբ է լինելու դասասենյակում առավոտյան կամ կեսօրից հետո: Աշակերտները կունենան միջնորմներ:
126	Դասավանդում	Կարո՞ղ ենք հրաժարվել անձամբ դպրոց հաճախելուց և շարունակել հեռակա ուսուցմամբ ուսումնական տարվա մնացած մասի ընթացքում:	Հեռակա ուսուցման տարբերակը կարող է ընտրվել ուսումնական տարվա մնացած մասի համար:
127	Դասավանդում	Դուք խոսում եք սպորտի մասին: Ի՞նչ եք ձեռնարկում դրամային/պարիս և երգչախմբին տալու համար նույն հնարավորությունները ինչ անում եք սպորտային թիմերի համար:	Մենք աշխատում ենք հանրային առողջապահության և դպրոցների հետ այդ դասերի համար համաձայնության գալու համար:
128	Դասավանդում	Ինչպե՞ս են ընտրովի դասերն անցնելու հիբրիդ մոդելի ընթացքում:	Ընտրովի դասերի նպատակով, մենք աշխատում ենք հանրային առողջապահության հետ, որովհետև պարամետրերը վերջերս փոխվել են:
129	Դասավանդում	Կարո՞ղ են ծնողներն ընտրել առավոտյան/կեսօրից հետո դասացուցակ, թե՞ այն նշանակվելու է:	Այս պահին, մենք ի վիճակի չենք թույլ տալ ծնողներին դասացուցակի ընտրություն կատարել:
130	Դասավանդում	Թույլ տալու՞ եք ծնողներին կամավոր աշխատել հիբրիդ մոդելի ընթացքում: Եթե այո, ի՞նչ հաճախականությամբ ենք քննություն անցնելու:	Այս պահին մենք թույլ չենք տալիս ծնողներին կամավոր աշխատանք կատարել: Մենք կշարունակենք հետևել հանրային առողջապահության հրահանգներին: Մենք գնահատում ենք նրանց աշխատանքը, բայց չենք կարող թույլ տալ ֆիզիկապես ներկա գտնվել դպրոցում:
131	Դասավանդում	Ի՞նչ նորություն կա տարրական դպրոցի հրաժարական դիմումնագրի վերաբերյալ:	Մենք չենք դիմում հրաժարական ստանալու համար:
132	Դասավանդում	Ի՞նչ կասեք արտադասարանական ծրագրերի մասին, որոնցից են երգչախումբն ու պարը: Կսկսվե՞ն դրանք սպորտային պարապմունքների նման:	Մենք մտածում ենք այդ դասերի, ինչպես նաև սպորտային ընթացակարգերի և անվտանգության մասին: Մենք աշխատում ենք հանրային առողջապահության հետ այդ դասերից յուրաքանչյուրը ետ բերելու համար:
133	Դասավանդում	Հարցադրում կատարվելու՞ է պարզելու համար, թե քանի հոգի է ցանկանում ընտրել լրիվ օրվա դասացուցակ, թե հեռակա ուսուցում: Եթե բավարար քանակությամբ երեխա չհավաքվի, կլինի՞ մեկ այլ տարբերակ:	Հաջորդ շաբաթ ուղարկելու ենք պարտավորվածության հարցաթերթիկ:
134	Դասավանդում	Կկարողանա՞ն նվազախմբի և երգչախմբի աշակերտները նվագել/երգել դասասենյակում:	Մենք աշխատում ենք հանրային առողջապահության հետ այդ դասերը ետ բերելու համար:
135	Դասավանդում	Նոր ուսուցիչներ աշխատանքի ընդունվելու՞ եք հիբրիդ մոդելի համար: «Իքս» ուսուցիչը դասավանդելու՞ է և հիբրիդ, և՛ հեռակա ուսուցման մոդելով:	Նոր ուսուցիչներ չեն ընդունվելու: Նրանք կդասավանդեն կամ հեռակա ուսուցմամբ կամ հիբրիդ մոդելով: Կարող են բացառություններ լինել:

## ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
136	Դասավանդում	Էջ 22 Փառեր Փոինտ ներկայացում. 100% հեռակա ուսուցում միջնակարգ դպրոց – Նշված է, որ ընտրովի դասերը սահմանափակ են APEX ծրագրում: Ի՞նչ է լինելու, եթե արդեն 0 դասի ընթացքում ունի ընտրովի դաս: Կշարունակե՞ն, թե չեն կարողանա շարունակել, եթե ընտրեն 100% հեռակա ուսուցում և ոչ թե հիբրիդ մոդել:	Մենք կփորձենք այն, բայց կախված է նաև ընտրովի դասից: Խորհուրդ եմ տալիս դիմել դոկտոր Պարամոյին:
137	Դասավանդում	Կարո՞ղ ենք ընտրել, որ երեխաները լինեն նույն Ա կամ Բ խմբում:	Մենք կփորձենք նույն ընտանիքի երեխաներին տալ նույն դասացուցակը:
138	Դասավանդում	Հույս կամ խոսակցություն կա՞, որ տարրական դպրոցի երեխաները մնան նույն ուսուցչի հետ:	Մենք կփորձենք, բայց կախված կլինի, թե քանի հոգի կընտրի յուրաքանչյուր մոդելը:
139	Դասավանդում	Կարո՞ն են աշակերտները հիբրիդ մոդելի ընթացքում, դպրոց բերել իրենց համակարգիչները, դպրոցի համակարգիչն օգտագործելու փոխարեն:	Այո, եթե ցանկանան: Նրանք կարող են օգտվել ԲԴՄՇ-ի հյուրերի ցանցից և ունեն նույն սահմանափակումները, ինչ որ Մ-5-րդ դասարանցիները: Սարքի փչանալը կամ կորելը/գողացվելը մտահոգության պատճառ կլին:
140	Դասավանդում	Կարո՞ղ են աշակերտները, եղանակի բարենպաստ լինելու դեպքում, անցկացնել դասերը դրսում: Նաև, կկարողանա՞ն երեխաները օգտվել խաղահրապարակի սարքավորումից:	Այո, կարող են, երբ հնարավոր լինի: Խաղահրապարակի սարքավորումը կօգտագործումը կախված է առողջապահական հրահանգներից:
141	Դասավանդում	Փոխելու՞ են աշակերտները դասասենյակները միջնակարգ դպրոցի անձամբ ուսուցման ընթացքում:	Այո
142	Դասավանդում	Կկարողանա՞ն աշակերտները շարունակել ուսումը տնային պայմաններում:	Այո
143	Դասավանդում	Կարո՞ղ են ծնողներն ընտրել հիբրիդ մոդելը կամ հեռակա ուսուցումը:	Այո, շաբաթվա վերջում, պարտավորվածության հարցաթերթիկ կուղարկենք, որը պետք է ետ ուղարկել մինչև նշված օրը:
144	Գործող բաժին	Օրական 2 անգամ զուգարան մաքրելը բավական չէ: Կարո՞ղ է այն ավելի հաճախակի կատարվել:	Մենք չունենք այդքան աշխատակից զուգարաններն ավելի հաճախակի մաքրելու համար:
145	Գործող բաժին	Դուք նշեցիք, որ աշակերտները պետք է 6 ոտքաչափ հեռու մնալ ուտելու ընթացքում, բայց ոչ խաղալիս: Ո՞վ է վերահսկելու խաղալու ընթացքում, որ դիմակները տեղում մնան:	Խաղահրապարակի և ճաշի ժամի վերահսկիչներն ու աղմինիստրատորները կվերահսկեն աշակերտներին և կշարունակեն ամրապնդել անվտանգության կանոնները:
146	Գործող բաժին	Ի՞նչ է նշանակում մաքրել համակարգիչները:	Կմաքրվի համակարգիչների ստեղնաշարը, մկնիկը, արտաքին մակերևույթը:



# ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
147	Գործող բաժին	Քանի՞ հավաքարար է աշխատում յուրաքանչյուր դպրոցում, հատկապես միջնակարգ և տարրական դպրոցներում:	Յուրաքանչյուր դպրոցի հավաքարարական անձնակազմ հիմնված է աշխատակազմի թվից/չափանիշներից, որոնք թողարկվել են Կալիֆոռնիայի դպրոցների բիզնես աշխատակիցների ասոցիացիայի կողմից (CASBO):
148	Գործող բաժին	Նորից եմ հարցս տալիս - Իմ երեխաների դպրոցներից ոչ մեկը չունի այնքան մեծ դասասենյակ, որ կարողանա դասարանի լրիվ աշակերտները տեղավորվեն իրարից 6 ոտքաչափ հեռու: Ինչպե՞ս եք լրիվ դասարանը տեղավորելու և ունենալ մեկ ուսուցիչ:	Հիբրիդ մոդելի ընթացքում, աշակերտների միայն կեսն է դպրոց հաճախելու առավոտյան կամ կեսօրից հետո հերթափոխով:
149	Գործող բաժին	Հնարավոր կլինի առնաց հպման ծորակներ տեղադրել գուգարաններում, որպեսզի ձեռքերը լվանան առանց ծորակին ձեռք տալու:	Դա հիանալի գաղափար է, բայց այս պահի դրությամբ, շատ թանկ է:
150	Գործող բաժին	Ո՞վ է մաքրելու դասասենյակները միջնակարգ դպրոցում:	Աշակերտները կմաքրեն իրենց նստարանները:
151	Գործող բաժին	Գրադարաններում և այլ տեղեր էլ է՞ 6 ոտքաչափ հեռավորություն պահպանվելու:	Այո
152	Գործող բաժին	Աշխատանքի ընդունելու՞ եք նոր հավաքարարների:	Ոչ
153	Գործող բաժին	Ո՞վ է մաքրելու դասասենյակները հերթափոխների միջև:	Հավաքարարները
154	Գործող բաժին	Ինչպե՞ս եք վարվելու ճաշի ժամին:	Ճաշը կուտեն տանը:
155	Գործող բաժին	Քանի՞ աշակերտ և քանի՞ չափահաս է լինելու դասասենյակում:	Տարողության քանակը կախված է դասասենյակի չափսից և աշակերտների թվից: Տարրական դպրոցի դասասենյակներում կլինի 10-12, իսկ միջնակարգում՝ 12-14: Այնուամենայնիվ, կլինեն բացառություններ ֆիզկուլտուրայի և ընտրովի դասերի ընթացքում: Մենք աշխատում ենք դրանց անվտանգության վրա:
156	Գործող բաժին	Կտեղադրվե՞ն նոր ֆիլտրները մինչև հունվար ամիսը:	MERV 13 ֆիլտրները հասանելի կլինեն հունվարին, բայց չենք կարծում, որ դա լուծում է, քանի որ դրանք գերվճար կստանան մեր ներկայիս HVAC- ների համար:
157	Գործող բաժին	Օդափոխիչ ֆիլտրները առնվազն merv 13 է՞ յուրաքանչյուր դպրոցում:	Այս պահին MERV 8: Մենք հետազոտում ենք MERV 13-ը:
158	Գործող բաժին	Քանի որ HVAC համակարգն այնտեղ որտեղ պետք է չկա, պարտադիր կլինի՞ պատուհանների և դռների բացելն, անկախ եղանակից:	Օդափոխումը բաշխվելու համար կխրախուսվի դռների և պատուհանների բացելը, բայց այն կխափանի HVAC-ի աշխատանքը:
159	Գործող բաժին	Մտածու՞մ եք աշխատանքի ընդունել կամ հավաքարարների պաշտոնը բարձրացնել և կոչել «Մանիտար մասնագետ», ով նվիրված կլինի երեխաներին անվտանգ պահելու գործում:	Մենք աշխատում ենք գործող բաժնի, Ուսանողական ծառայությունների և բուժքրոջ հետ և մշակել ենք մաքրելու /ախտահանելու ձևեր և պարապմունքներ հավաքարարների համար:

## ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
160	Գործող բաժին	Խաղահրապարակը բաց կլինի՞ հիբրիդ մոդելով սովորող աշակերտների համար: Եթե այո, ինչպես եք մաքրելու այն:	Մենք կշարունակենք վերահսկել հրահանգները:
161	Գործող բաժին	Ովքե՞ր են յուրաքանչյուր դպրոցի անվտանգության թիմի անդամները:	Խնդրում ենք դիմել դպրոցի տնօրենին անվտանգության թիմի անդամների հետ ծանոթանալու համար:
162	Գործող բաժին	Եթե ինձ Քրոմբուկ է հարկավոր, կարո՞ղ եմ այն ձեռքբերել իմ երեխայի համար: Ինչպե՞ս եմ այն անելու:	Խնդրում ենք դիմել Տեխնոլոգիայի բաժնին և ձեր երեխան Քրոմբուկ կստանա: Զանգահարել (818) 729-3401
163	Գործող բաժին	Ինչպե՞ս է կառավարվելու հեռավորության պահպանումն ու խճողումները:	Խնդրում ենք դիտել մեր կայքում տեղադրված դպրոցների բացման տեսաժապավենը:
164	Գործող բաժին	Ինչպե՞ս են փոքրիկները հասկանալու առողջապահական օրենքները. 6 ոտքաչափ հեռավորություն պահելն անհնար է թվում:	Խնդրում ենք դիտել դպրոցների բացման տեսաժապավենը:
165	Գործող բաժին	Տեղադրվելու՞ է թափանցիկ միջնորդ դասասենյակում և/կամ գրասենյակում, ուսուցիչների հանգստի սենյակում և այլն:	Թափանցիկ միջնորդներ են տեղադրվել բարձր երթևեկության տեղերում և որտեղ 6 ոտքաչափ հեռավորություն հնարավոր չէ պահպանել:
166	Գործող բաժին	Երեխաները կմնա՞ն նույն դասասենյակում ամբողջ օրը, թե միջանցքով անցնելով կտեղափոխվեն մեկ այն դասարան:	Միջնակարգ դպրոցի աշակերտները կտեղափոխվեն մեկ դասասենյակից մյուսը: Հիշեցումներ են տեղադրված ֆիզիկական հեռավորություն պահպանելու համար:
167	Գործող բաժին	Դռներն և պատուհանները բաց կմնա՞ն դասասենյակում օդափոխման համար:	Սա առաջարկված տարբերակ է, բայց բաց դռների /պատուհանների առկայությունը կխափանի HVAC-ի աշխատանքը:
168	Գործող բաժին	ԲԴՄՇ-ի հատկացրած սննդի մեծ մասը տաքացնելու կարիք ունի: Որնե՞ս արք տրամադրվելու է այն դպրոցում տաքացնելու համար:	Առավոտյան/կեսօրից հետո հիբրիդ մոդելի ընթացքում աշակերտները կճաշեն տանը, որովհետև դպրոցում կլինեն միայն առավոտյան կամ կեսօրից հետո:
169	Գործող բաժին	Որտե՞ղ են աշակերտները ճաշելու և ո՞վ է վերահսկելու:	Առավոտյան/կեսօրից հետո դասացուցակը բացառում է ճաշի անհրաժեշտությունը:
170	Գործող բաժին	Ինչպե՞ս եք ֆինանսավորում այս ամենը, եթե ԲԴՄՇ-ի բյուջեն արդեն սահմանափակ է:	Շրջանը մեկ անգամ \$10 միլիոն դոլարի Կորոնավիրուսի օգնություն է ստացել անձնական պաշտպանման սարքեր, տեխնոլոգիա գնելու և հեռակա ուսուցումն անցկացնելու համար:
171	Գործող բաժին	Ինչու՞ ախտահանել շաբաթը մեկ անգամ, եթե վիրուսը 3-ից 4 օրվա կյանքի տևողություն ունի: Պետք է ավելի հաճախակի մաքրել:	Շաբաթական ախտահանում է լրացնում է ամենօրյա մաքրումը:

## ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Գործող բաժին	Հարց	1-ին պատասխան(ներ)
172	Գործող բաժին	Ո՞վ է կատարելու ախտահանումը: Կարծես թե հավաքարարներն արդեն դժվարանում էին մաքրել գուգարանները, մինչև Կորոնավիրուսը: Լրացուցիչ հավաքարարներ կա՞ն:	Այս պահին ոչ մի մտադրություն չունենք նոր հավաքարարներ ընդունել: Մենքի և խաղահրապարակի աշխատակազմը կօրնի մաքրել բարձր հպման մակերևույթները: Հավաքարարները կմաքրեն գուգարանները:
173	Գործող բաժին	Երբ/եթե ետ վերադառնանք դպրոց, կարիք կլինի՞ համակարգիչների: Պե՞տք է աշակերտը դպրոց բերի իր հետ համակարգիչ, եթե դպրոցական շրջանն իրեն Քրոմբուկ չի հատկացրել:	Եթե պետք լինի օգտվել համակարգիչներից, ապա նրանք կօգտվեն մեր սահմանափակ թվով համակարգիչներից, բայց կարիք չկա Քրոմբուկ բերել դպրոց:
174	Գործող բաժին	Օդը զտող սարքեր կտեղադրվե՞ն դասասենյակներում:	Օդի որակը և օդափոխությունը բարելավելու համար, մենք բազմաթիվ մեթոդներ ենք հետազոտում, որոնցից են օդի զտիչները:
175	Գործող բաժին	Ի՞նչ է լինելու, եթե դասասենյակները բացվող պատուհաններ չունեն և ունեն միայն հրդեհային չբացվող պատուհաններ:	Դռները/պատուհանները բացելուց բացի, մենք լրացուցիչ ձևեր ենք փնտրում օդափոխելու համար: HVAC-ի աշխատանքի վրա վատ ազդեցություն կունենան բաց դռներն ու պատուհանները:
176	Գործող բաժին	Դասարանի օդը մաքրելու՞ էք (ինչ որ մի բան փչելու էք) դասերի միջև:	Մենք չենք պլանավորում որևէ բան փչել օդափոխության համար, բայց ձևեր ենք փնտրում օդի որակը և օդափոխումը բարելավելու համար:
177	Գործող բաժին	Աշխատանքի ընդունելու՞ էք նոր հավաքարարների, որպեսզի կատարեն այս ամբողջ մաքրությունը:	Այս պահին, մենք չենք պլանավորում աշխատանքի ընդունել նոր հավաքարարներ: Մենք աշխատում ենք մեր մյուս աշխատակիցների հետ, որպեսզի նրանք օգնեն մաքրել ու ախտահանել բարձր հպման մակերևույթները օրվա ընթացքում:
178	Գործող բաժին	Մաքրող անձեռոցիկներ կլինե՞ն գուգարանի նստարանը մաքրելու համար:	Այս պահին, մենք չենք պլանավորում անել այդ:
179	Գործող բաժին	Ե՞րբ են այս HVAC և իոնացման սարքերը տեղադրվելու:	Մենք աշխատում ենք ունենալ այդ համակարգը մինչև աշակերտների վերադարձը: Ֆինանսավորումը դժվար է: Այս հոդվածը խոսում է այդ մասին. <a href="https://edsources.org/2020/to-safely-reopen-schools-we-have-to-talk-about-indoor-air-quality-and-ventilation/640701">https://edsources.org/2020/to-safely-reopen-schools-we-have-to-talk-about-indoor-air-quality-and-ventilation/640701</a>

# ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
180	Գործող բաժին	Կունա՞ն աշակերտական նստարանները միջնորմներ:	Մենք միջնորմներ ենք պատվիրել այն նստարանների համար, որոնց սենյակներում հնարավոր չէ պահպանել 6 ոտքաչափ հեռավորություն:
181	Գործող բաժին	Աշխատանքի կընդունե՞ք լրացուցիչ աշխատակիցներ՝ դասերի միջև դասասենյակները մաքրելու համար:	Մենք աշխատում ենք արհմիությունների հետ, որպեսզի աշխատակիցները կարողանան կատարել այլ պարտականություններ, որոնցից են մաքրելու ու ախտահանելը: Հնարավոր է նաև, որ օգնեն ուսուցիչներն ու աշակերտները: Այս պահին ֆինանսները թույլ չեն տալիս նոր աշխատակիցներ ընդունել:
182	Գործող բաժին	«Ծալովի անձնական վահաններ» կտրամադրվեն աշակերտների համար դասասենյակում օգտագործելու համար:	Մենք միջնորմներ ենք պատվիրել այն դասասենյակների համար, որտեղ դժվար է 6 ոտքաչափ հեռավորություն պահպանել:
183	Գործող բաժին	Ինչպե՞ս ենք երեխաներին բերելու դպրոց, վերցնելու դպրոցից և մտնելու գրասենյակ:	Ծնողները լրացուցիչ տեղեկություն կստանան դպրոց մտնելու և դուրս գալու վերաբերյալ: Ծնողները պետք է էլեկտրոնային փոստի և հեռախոսի միջոցով դիմեն գրասենյակին:
184	Այլ	Ես օգտվեցի ձեր տված QR կոդից: Այն ինձ տարավ մեկ այլ կայք, բայց չկարողացա միանալ, որովհետև Փեյսֆալ հղումը չաշխատեց:	Շնորհակալություն փորձելու համար: :-) Տեղական PTA-ին միանալու համար, դուք կարող եք հյուրընկալել Բրբենքի խորհրդի PTA կայքը. <a href="http://BurbankCouncilPTA.org">BurbankCouncilPTA.org</a>
185	Այլ	Ինչպե՞ս է որ Կալիֆոռնիայի և մնացած նահանգների երեխաներն արդեն վերադարձել են դպրոց:	Նրանք, Լոս Անջելեսի գավառից, ավելի քիչ Կորովալիսիոսի դեպքեր ունեն:
186	Այլ	Դուք չե՞ք կարծում, որ այս թեմայի շուրջ պետք է խոսել դպրոցները բացելուց 2 շաբաթ առաջ և ոչ թե հիմա: Ըստ դոկտոր Հիլլի, դպրոցները կբացվեն ամենաուշը հունվարին: Ինչու՞ ենք հիմա խոսում այդ մասին:	Մենք հիմա պատրաստվում են, որ հարկ եղած դեպքում բացենք դպրոց: Մենք դժվարություններ ունեցանք ախտահանիչ նյութեր և անձնական պաշտպանության սարքեր ձեռք բերելիս, դրա պատճառով հիմա ենք պլանավորում, որ պատրաստ լինենք վերադառնալու:
187	Այլ	Հարցը այն, թե պե՞տք է որ մենք հետևենք Լոս Անջելեսի դպրոցների միացյալ շրջանի, թե գավառային հրահանգներին:	Մենք չենք հետևում ԼԱԴՄՇ-ի հրահանգներին, այլ Լոս Անջելեսի կրթական գրասենյակի (LACOE) և Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահության (LACDPH) հրահանգներին:
188	Այլ	Ես հարցս ուղարկել եմ էլեկտրոնային նամակով, բայց ինձ հետաքրքրում է, թե հիբրիդ մոդելը կդառնա՞ ԲԴՄՇ-ի մշտական տարբերակը: Միգուցե՞ միայն մեկ ուսուցիչ շարունակի հեռակա ուսուցումը յուրաքանչյուր դասարանի մակարդակի համար: Մենք անակնկալ շատ առավելություններ ենք տեսնում այս մոդելի կիրառմամբ:	Մա դեռ չի քննարկվել, բայց կմտածենք այս մասին, երբ քննարկենք մեր ապագա ծրագրերը:

## ԲԴՄՇ-ի դպրոցները բացելու վերաբերյալ հարց ու պատասխանի քաղաքապետարանի հանդիպում - 10/21/20 - Մաս 1

#	Կատեգորիա	Հարց	1-ին պատասխան(ներ)
189	Այլ	Կարո՞ղ ենք ծանոթանալ տեսողական պլակաների և նշանների հետ, որպեսզի կարողանանք բացատրել դրանց նշանակությունը մեր երեխաներին:	Այո: Խնդրում ենք դիտել մեր տեսաժապավենը, իսկ տնօրեններն առանձին լուսանկաներ կտեղադրեն դպրոցի կայքում:
190	Այլ	Ես ցանկանում եմ իմանալ, եթե աշխատակիցները երեխաների համար կա՞նք երեխաների խնամքի կենտրոն:	Այո, Ջանգի շուրջ (ATB) ծրագիրը զեղչված գներ կունենա ԲԴՄՇ-ի աշխատակիցների համար:
191	Սոցիալ հուզական	Լրացուցիչ ի՞նչ եք անում, որպեսզի երեխաներին սովորեցնել, թե ինչպես շփվել ուրիշների հետ: Շատ դժվար է փոքրիկներին «խաղալ» ուրիշների հետ:	Խնդրում ենք դիմել դպրոցի միջամտության ուսուցչին և աշխատակիցներին: Նրանք աշխատում են այն աշակերտների հետ, որոնց օգնություն է հարկավոր կամ դժվարանում են:
192	Սոցիալ հուզական	Ուսուցիչները շատ լավ են աշխատում հեռակա ուսուցման մոդելի կիրառմամբ, բայց անձամբ դպրոց հաճախելը կարևոր է հոգեկան առողջության համար: Հաշվի կառնե՞ք «ամբողջական երեխա» հասկացությունը, երբ պլանավորեք հիբրիդ մոդելը: Կորոնավիրուսը միակ վարակը չէ, որ պետք է հաշվի առնել: Այն միայն մեկն է: Կան նաև ինքնապաշտպանություն, թմրադեղեր, ալկոհոլ, էկրանի ժամ, մեկուսացում և դեպրեսիա, որոնք ռիսկի տակ են դնում երեխաներին:	Շնորհակալություն ձեր առաջարկի համար: Մենք հասկանում ենք, որ համաճարակը բացասականորեն է ազդում մեր աշակերտների և համայնքի վրա:
193	Սոցիալ հուզական	Ինձ մտահոգում է այն փաստը, որ էկրանի առջև ուսուցումը բացասականորեն է ազդում իմ երեխայի վրա: Ի՞նչ է անում շրջանը այդ հարցը լուծելու համար:	Մեր կայքի «ԹՎային ռեսուրսներ աշակերտների և ընտանիքների համար» բաժնում են տեղադրված օրվա կառուցվածքի և ընդմիջումների ներդրման դասացուցակը: Կարող եք նաև դիմել դպրոցի միջամտության մասնագետին, որն աշխատում է փոքր խմբերի հետ:
194	Սոցիալ հուզական	Կխաղան երեխաները դպրոցի խաղահրապարակում:	Կտրվեն դադարներ շարժվելու համար, բայց իրար միջև պետք է պահպանել 6 ոտքաչափ հեռավորություն:
195	Հատուկ ուսուցում	Մենք անընդհատ լսում ենք, որ Հատուկ ուսուցման աշակերտներն առաջինն են դպրոց վերադառնալու, բայց չգիտենք երբ: Իմ երեխան շատ է դժվարանում և անձամբ չստանալով իր ծառայությունները, ազդում է իր աճին և հաջողությանը: Ո՞րն է ամենաառեալ օրը նրանց վերադարձի համար:	Մենք աշխատում ենք հատուկ ուսուցման աշակերտների փոքր խմբեր ետ բերել դպրոց մինչև հիբրիդ մոդելի կիրառումը: Դեռ հայտնի չէ երբ: Հատուկ ուսուցման բաժնի հարց ու պատասխանի երեկոն տեղի կունենա երեքշաբթի, 10/27-ին, երեկոյան ժամը 6-7:30: Խնդրում ենք ուղարկել հարցերը <a href="mailto:Kelliedevries@burbankusd.org">Kelliedevries@burbankusd.org</a>